Կարծիք

Ջեմմա Սամվելի Բաղդասարյանի «Ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և տարեցների տարբերակված սպասարկման կազմակերպումը Հայաստանում» վերնագրով ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն) մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման վերաբերյալ

Միավորված ազգերի կազմակերպությունն առաջիկա տասնամյակը հռչակել է առողջ ծերացման տասնամյակ և առանձնացնում է չորս կարևոր ուղղություն, որոնք պետք է թիրախավորվեն այդ ռազմավարական նպատակն ապահովելիս. բարենպաստ միջավայր տարեց անձանց համար՝ նման միջավայրն ապահովում է ֆիզիկական և սոցիալական խոչընդոտների վերացում և քաղաքականությունների, համակարգերի, ծառայությունների, ապրանքների ու տեխնոլոգիաների ներդրում, որոնք ապահովում են առողջ ծերացման անհրաժեշտ պայմաններ, և հնարավորություն են տալիս մարդկանց շարունակել անել այն, ինչ իրենց համար կարևոր է, նույնիսկ երբ նրանք կորցնում են դա անելու կարողությունը, պայքար տարիքի հիմքով խտրականության դեմ՝ տարիքի հիմքով խտրականությունն ազդում է մշակվող քաղաքականությունների ու ծրագրերի վրա և բացասական հետևանքներ է ունենում տարեց անձանց առողջության ու բարեկեցության համար, համալիր խնամք՝ ենթադրում է որակյալ բժշկական ծառայությունների հասանելիություն՝ չպայմանավորված տարեց անձի ֆինանսական բարեկեցությամբ, երկարատև խնամք՝ որակյալ երկարատև խնամքի հասանելիությունը կարևոր է իրենց մասին հոգ տանելու հմտությունները կորցրած մարդկանց համար՝ պահպանելու իրենց ֆունկցիոնալ կարողությունները, օգտվելու մարդու հիմնական իրավունքներից և ապրելու արժանապատիվ:

Ահավասիկ, պատահական չէ, որ բնակչության ընդհանուր թվաքանակում տարեցների մասնաբաժնի աճը պահանջում է մեծ ուշադրություն՝ սոցիալական, հոգեբանական, բժշկական և այլ խնդիրներին, որոնց լուծումն անհնար է առանց համակարգված գիտահետազոտական լուրջ ուսումնասիրություն իրականացնելու:

Թեև առկա են որոշակի հետազոտություններ այս ուղղությամբ, այնուամենայնիվ դեռևս շատ ու շատ հարցեր կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման:

Ուստի, շարունակաբար անհրաժեշտ է խորացված հետազոտություններ իրականացնել տարեցների սոցիալ-հոգեբանական դետերմինանտների, սոցիալական և հոգեբանական ծառայությունների մատուցման, նրանց կարիքների բացահայտման և լուծման ուղղությամբ:Սույն ատենախոսության մեջ հեղինակը առաջադրված հիմնախնդիրը դիտարկել է դերային տեսության, դերային վարքի ու սպասումների տեսանկյունից:

Ներկայացված ատենախոսությունը համալիր հետազոտություն է բնորոշ արդիականությամբ ու հրատապությամբ, որի շրջանակում ուսումնասիրվել է տարեցների և ծերունական տարիքի անձանց սոցիալ-հոգեբանական դետերմինանտները, բացահայտվել օրինաչափություններ և մշակել առաջարկություններ՝ Հայաստանում նրանց սոցիալ-հոգեբանական սպասարկման կազմակերպման կատարելագործման նպատակով:

Առաջադրված է հետաքրքրական վարկած առ այն, որ ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտների ուսումնասիրումը և դրանց առաջատարների (դոմինանտների) առանձնացումը կոնկրետ անձի համար, հնարավոր կդարձնի սոցիալական և հոգեբանական ծառայություններում կարիքների սահմանման չափորոշիչների հիմնավորված մոտեցում մշակել:

Տարեցների ֆունկցիոնալության և սոցիալ-հոգեբանական ծառայություններում նրանց կարիքների չափորոշիչները սահմանելու համար կարող է կիրառվել սոցիալական, հոգեբանական և ֆիզիոլոգիական դետերմինանտների գնահատման բազմամասնագիտական կենսահոգեբանասոցիալական մոդել՝ հաշվի առնելով

ֆունկցիոնալության, կենսագործունեության սահմանափակման և առողջության միջազգային դասակարգման սկզբունքներն ու մոտեցումները:

Ատենախոսի կողմից առաջադրված խնդիրները լիովին ապահովել են հետազոտության նպատակի իրականացումը բացահայտելով տարեց մարդկանց սոցիալական և հոգեբանական ծառայությունների կարիքի, դրանց մոտուցման ձևի, մեթոդների, ծավալի և որակի վրա ազդեցություն ունեցող հիմնական ֆիզիոլոգիական, սոցիալական և հոգեբանական դետերմինանտները, հետազոտելով թե դերային վարքը և մեկ դերի փոխարինումը մյուսով, բացահայտելով սոցիալական միջավայրի, կյանքի պայմանների դերը նորմատիվ մոդելների, արժեքների և վարքագծի ձևավորման գործում:

Իրականացված հետազոտությամբ բացահայտվել է սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցման համակարգի կատարելագործման միջոցով տարեցների պասիվ կյանքից դեպի ակտիվ կյանքի անցման իմաստային դերային փոփոխության հնարավորությունը՝ ներդնելով անհատական մոտեցման սկզբունքը, որը հենվում է սոցիալ-հոգեբանական դետերմինանտների վրա: Հոգեբանական գիտակարգում էական ներդրում է ատենախոսի կողմից դիտարկված ֆունկցիոնալության հրեատրիկ և հերոնտոլոգիական համալիր գնահատման իրականացման նպատակահարմարությունը՝ ֆունկցիոնալության, կենսագործունեության սահմանափակումների, առողջության միջազգային դասակարգման սկզբունքների և մոտեցումների կիրառմամբ և առաջարկվել մեթոդիկա, որը համադրվելով ինքնագնահատականի հետ կարող է տարեցների ֆունկցիոնալ սահմանափակումների և պահպանված հնարավորությունների վերաբերյալ օբյեկտիվ ինֆորմացիա տալ:

Ներկայացված ատենախոսությունը բնորոշվում է տեսական և գործնական նշանակությամբ:

Տարեցների սոցիալական և հոգեբանական դետերմինանտների կարևորության տեսական հիմնավորվածությունը և հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս նրանց սոցիալական կարիքների չափորոշիչների վերանայման հիման վրա մշակել ուղղորդման տարբերակված ծրագրեր և

տեխնոլոգիաներ: Դա տարեցների սոցիալ-հոգեբանական սպասարկման կատարելագործմանն ուղղված (նրանց կարիքներին համապատասխան, ներքին ռեսուրսների կիրառման և անձնական պոտենցիալի ներառմամբ) գործնական առաջարկություններ մշակելու հնարավորություն կտա՝ ի նպաստ հասարակությունում նրանց ինքնաիրացման և ակտիվ երկարատև կյանքի:
Այդուհանդերձ առկա են որոշ նկատառումներ, որոնց վերաբերյալ կցանկանայինք լսել ատենախոսի մեկնաբանությունները:

Մասնավորապես՝

1.Ատենախոսությունը առավելապես կշահեր, եթե մանրամասն ներկայացված լիներ ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտների ամբողջական էությունը, առանձնահատկությունները, նրանց գործառութային դերն ու նշանակությունը:

2.Մեկնաբանման կարիք ունի դրույթը այն մասին, թե դերային վարքը և մեկ դերի փոխարինումը մյուսով, որքանո՞վ և ի՞նչ մեխանիզմներով կարող են նպաստել տարեցների կյանքի և գործունեության վերաիմաստավորմանը:

3.Մանրամասնելու կարիք ունեն այն մեխանիզմներն ու մեթոդական ապարատը, որոնց կիրառմամբ հնարավորություն կընձեռնվի բարձրացնել տարեցների սոցիալական մոտիվացիան, ինչպես նաև անցում կատարել սոցիալական սպասարկման «խնամող» տեխնոլոգիաներից՝ «ակտիվացնող» տեխնոլոգիաների:

Նշված դիտարկումներն ամենևին չեն նվաստացնում գիտական աշխատանքի նշանակությունը: Այն ամբողջովին հիմնված է հեղինակի հետազոտությունների վրա, աշխատանքի դրույթներն ու եզրակացությունները բխում են հենց աշխատանքից և, վերջապես, լուծում են տալիս այն նպատակին, որը հեղինակը դրել է իր առջև:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Ջեմմա Սամվելի Բաղդասարյանի «Ծերության սոցիալ-հոգեբանական դետերմինանտները և տարեցների տարբերակված սպասարկման կազմակերպումը Հայաստանում» վերնագրով ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է, որն ունի գիտատեսական և գործնական նշանակություն, արդյունքները հավաստի են, հրատարակված աշխատանքներն արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԹ. 00. 03 «Սոցիալական հոգեբանություն» թվանիշին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ն. Հակոբյան

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ն. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտքարտուղար Մ. Սարգսյան